Կյուրիկյան թագավորության հիմնադիր Գուրգենին (Կյուրիկե) և նրա եղբոր՝ Անիի Սմբատ Տիեզերակալ թագավորին, որոնց արեշատության համար է եղել կառուցված Ամենափրկիչ եկեղեցին 966 թվականին։

Ամենափրկիչը վերանորոգման է ենթարկվել 1181 թվականին՝ նույն եկեղեցու ընդարձակ ժամատունը դինելու միջոցին։ Այդ նորոգությունը նախաձեռնել և գլուխ է բերել վանքի առաջնորդ Հովհաննեսը, որին



Նկ. 6. Ամենափրկիչ եկեղեցու աբ հակառը։

օժանդակել են ամիր Քուրդը և Խաչենեցի Գրիգոր վարդապետը, որ գրականության մեջ հայտնի է Տուտեորդի հայրանունով։ Վերջինիս մահարձանը հանդիսացող գեղեցկագույն խաչքարի վրա ևս հիշատակված է Հովհաննես առաջնորդի կատարած նորոգությունները (արձ. 168)։ Բացի դրանից, նրա հիշատակագրությունը պահպանվել է ներքին գավթի գմբեթի վրա (արձ. 35)։ Տուտեորդու խաչքարի արձանագրություններից երևում